ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԼՄՏՀ-ԲԸԾՁԲ-17/01

ք. Տաշիր <<02>> փետրվարի 2017 թ.

Տաշիրի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Է. Արշակյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ՓԱՅԼՔ>> ՍՊԸ -ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Յավրումյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Տաշիր համայնքի կենցաղային աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են [redacted] Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի [redacted] Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով [redacted] փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը [redacted] Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 40.680.000 (քառասուն միլիոն վեց հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25.12.2017թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.7 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.9 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.10 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.11 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Տաշիրի համայնքապետարան	<<ՓԱՅԼՔ>> ՍՊԸ
ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94	ք. Տաշիր, Գրիգորյեդովի 14
Տաշիրի ՏԳԲ	ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 900272260028	Հ/Հ 220143330235000
ՀՎՀՀ 07200536	ՀՎՀՀ 06948686
----------Է. Արշակյան	----------Ա. Ցավրումյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
<<02>> փետրվարի 2017 թ. կնքված
N ՀՀ ԼՄՏՀ- ԲԸՇՁԲ – 17/01
ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ՝

Ձեռքբերվող Ծառայության նկարագիր
Տաշիր համայնքի կենցաղային աղբահանության և սանիտարական մաքրման ծառայություններ Անհրաժեշտ է իրականացնել Տաշիր համայնքի փողոցների՝ 1. Սանիտարական մաքրում • փողոցների ավլում ձեռքով և մեքենայացված եղանակով (փողոցների ցանկը և ավլվող մակերեսները ներկայացվում են) • ավելվածքի բարձում և տեղափոխում աղբավայր ձյան մաքրում (աղ – ավազային խառնուրդի, շլակի և այլ սառցակալման դեմ պայքարի միջոցների ձեռք բերում) 2. Համայնքի վարչական տարածքի աղբահանություն համաձայնեցված գրաֆիկին համապատասխան: 3. Աղբավայրի մոտեցման ճանապարհի պահպանում, հարթեցում և աղբակույտի պարբերական հողածածկում: Փողոցների, հրապարակի, զբոսայգիների, պուրակների, սիզամարգերի մաքրումը աղբից, տերևակույտերից, փոշուց, կենդանիների դիակներից, բարձումը ավտոինքնաթափին տեղափոխումը և տեղադրումը աղբավայրում պետք է իրականացվի շաբաթական 6 օր և տարեկան ոչ պակաս 300 օր պարբերականությամբ: Ամառային մաքրման աշխատանքները պետք է ավարտվեն առավոտյան ժամը 8:30-ին: Փողոցների, մայթերի, աստիճանների, զազոնների ամառային մաքրման ժամանակ հավաքարարը պետք է ապահովի սպասարկվող տարածքներից աղբի ու փոշու հեռացումը, բարելավի միկրոկլիման և նվազեցնի օդի փոշոտվածության աստիճանը, ինչպես նաև պետք է ապահովված լինի սեզոնային համապատասխան ազդանշանային արտահագուստով: Սահմանված նորմաներին համապատասխան կցված սպասարկվող տարածքի սահմաններում՝ սկսելով աշխատանքը, հավաքարարը նախ և առաջ պետք է մաքրի մայթը ամբողջ լայնությամբ և երթևեկելի մասի մերձվածքային տարածքը 0.75 մ լայնությամբ եզրաքարից հաշված: Մեքենայացված մաքրումը պետք է իրականացվի հատուկ ավլող մեքենայի միջոցով, երթևեկելի մասի ամբողջ լայնությամբ աղբը հավաքելով եզրաքարի տակ հետագայում ձեռքով կուտակավորելու և տեղափոխելու համար: Հիմնական մաքրումն իրականացնելուց հետո հավաքարարը պետք է հետևի սպասարկվող տարածքի մաքրությանը, հավաքի ծխախոտի մնացորդները, թղթի կտորները և այլ աղբի մնացորդները, հնարավորին չափով մաքրի մայթերը, մերձվածքային մասը, տեղադրված աղբարկղերի շրջակայքը և տարածքների մաքրությունն ապահովող այլ պարտականություններ: Մաքրվող տարածքներից հավաքարարն աղբը և փոշին պետք է մաքրի ավելու միջոցով՝ օգտագործելով նաև գոգաթիակ: Կանաչ տարածքների մաքրումը պետք է իրականացնի ուղղակիորեն ձեռքով, այնպես, որ մաքրման ընթացքում բույսերը չվնասվեն: Մաքրված աղբը և փոշին կույտերով պետք է հավաքվի դրանց հետագա տեղափոխման համար նպատակահարմար միջկույտային հեռավորությամբ, և ապա տեղափոխվի: Հատուկ ուշադրություն պետք է դարձվի սպասարկվող տարածքում տեղադրված աղբարկղերի շրջակայքի սանիտարական վիճակին, աղբի ժամանակին հավաքման և տեղափոխման վրա: Ձմեռային մաքրման ժամանակ պետք է ապահովվի սպասարկող տարածքի ձյան շերտի մաքրումը, հավաքումը և հեռացումը, ինչպես նաև դրանց երթևեկելի մասերի սառցածածկույթի վերացումը: Բացի այդ, պետք է ապահովվի փողոցների, մայթերի ու քաղաքային հրապարակի մաքրությունը (աղբի ավլումը և հավաքումը) ձյան տեղումների

միջև ընկած ժամանակաշրջանում:

Թարմ, դեռևս չամրացած ձյունը մինչև 2սմ հաստության շերտով պետք է մաքրվի ցախավելի միջոցով, իսկ 2 սմ-ից ավելին՝ քերելով (քերիչ-թիակով): Բարելավված ծածկույթ ունեցող տարածքներից ձյունը պետք է մաքրվի լրիվ, իսկ անբարեկարգ տարածություններից՝ ոչ լրիվ, թողնելով ձյան մի շերտ (ամրացած) հետագա տեղումների մաքրելը հեշտացնելու համար: Տարածքներից հավաքված ձյունը պետք է վերածվի թմբերի կամ կույտերի, որոնք դասավորվեն մայթերին զուգահեռ:

Տրանսպորտի նորմալ երթևեկությունն ապահովելու նպատակով ձնաթմբերը պետք է կուտակվեն այնպես, որ նրանց հիմքերի լայնությունը 1,5 մ-ից ավելի չլինի:

Այնուհետև հավաքված ձյունը պետք է տեղափոխվի կանաչ տարածքները, կամ հեռացվի սպասարկվող տարածքի սահմաններից: Ձյան ամրացումից խուսափելու նպատակով տեղումների սկզբնական շրջանում նպատակահարմար է ձյունը մշակել ավազի և քլորիդների (ըստ տեխնոլոգիայի) խառնուրդով: Սառցակալած կամ պնդացած ձյան շերտը սպասարկվող տարածքներից պետք է մաքրվի այն նախապես քայքայելուց կամ ջարդելուց հետո: Սառցակտորների հեռացումը պետք է կատարվի կոտրելուց և կուտակելուց անմիջապես հետո: Մինչև 2 սմ. հաստությամբ սառցակույտերը, նախքան մաքրումը, պետք է մշակվեն քլորիդներով:

Հավաքված ձյան և սառցե կույտերը մեքենաների միջոցով պետք է հեռացնել փողոցներից:

Ըստ սպասարկվող տարածքների փողոցների, ձմեռային մաքրումը պետք է կատարվի նույն հերթականությամբ, ինչ-որ ամառային մաքրման դեպքում:

Ընդհանուր սանիտարական մաքրվող տարածքի մակերեսը կազմում է 51960 քմ օրական:

Ավլման տակ չներգրավված փողոցների սանիտարական մաքրումը իրականացնել կենցաղային աղբահանության ընթացքում, փողոցում առկա աղբակույտերը բարձել աղբահան մեքենա և տեղափոխել աղբավայր:

Պետք է իրականացվի Տաշիր համայնքի վարչական տարածքում գոյացող կենցաղային և ոչ կենցաղային աղբի հավաքման, պահման, փոխադրման, աղբավայրում տեղադրման և փողոցների, տարբեր տարողունակություն ունեցող աղբամանների աղբահանության և սահմանված տարածքների սանիտարական մաքրման ծառայությունները:

Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների իրականացման ժամանակ պետք է.

- նվազեցնել և չեզոքացնել մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա աղբի բացասական (վտանգավոր) ներգործությունը,
- ապահովել բնակչության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմաններ,
- աղբի փոխադրման իրականացումը կազմակերպել՝ բացառելով շրջակա միջավայրի աղտոտումը,
- աղբը տեղադրել օրենսդրությամբ սահմանված կարգով արտոնագրված աղբավայրերում:

Աշխատանքները կատարվելու են վեցօրյա պարբերականությամբ, ձեռքի և մեքենայացված եղանակով:

Յուրաքանչյուր պահի ամեն աղբարկղի լցվածությունը առավելագույնը պետք է լինի 80%:

Յուրաքանչյուր անգամ աղբարկղերը դատարկելուց մաքրել հարակից 1.5-5մ տարածքը: Աղբահանության ծառայություններն իրականացնելու ժամանակ աղբարկղը աղբատար մեքենա դատարկելուց թափված աղբը ավելել: Աղբարկղերը ամիսը մեկ անգամ ախտահանել հատուկ նյութերով: Մեքենաները աղբավայր մեկնելուց հետո անպայման ենթարկվել աղտահանիչ միջոցներով լվացման: Ինքնաթափ մեքենաներով աղբի տեղափոխումը իրականացնելու ժամանակ մեքենաները պարտադիր պետք է ծածկոցներով ծածկված լինեն:

Յուրաքանչյուր մեքենա-մեխանիզմների անսարքության ժամանակահատվածը չի կարող 6 ժամից ավել լինել: Անսարք մեքենա-մեխանիզմների թիվը չի կարող գերազանցել ամբողջ մեքենա-մեխանիզմների 10%-ը:

Կնքվելիք պայմանագրով նախատեսել, որ սանմաքրման ծառայությունները մատուցվում են մինչև օպերատորի հետ պայմանագրի կնքումը, ոչ ավելի քան 31.12.2017 թ.-ը:

ՓՈՂՈՑՆԵՐԻ ԵՎ ՄԱՅԹԵՐԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՄԱԿԵՐԵՍՆԵՐԻ ՑԱՆԿ	
Անվանումը	Սպասարկվող տարածք /քմ/
Զահուկյան	17760
Սայաթ- Նովա	1620
Խնաջյան	7860
Երեբունի	3840
Աբովյան	3840
Դեմիրճյան	7200
Շահումյան	2880
Գետափնյա	1320
Վ. Սարգսյան	4320
Գրիբայեդով	1320
Ընդամենը	51960

Ընդհանուր՝ 51960 մ² իրականցվելու է շաբաթական 5 օր

Աղբահանությունը իրականցման աշխատանքներ

Երևանյան փողոց երկարությունը՝ 5480մ - աղբահանությունը իրակացվում է ամեն օր:

Ասֆալտապատ փողոցներում՝ ընդանուր երկարությունը 8660մ , աղբահանությունը իրականացվում է շաբաթական 4 օր:

Զահուկյան	2960 մ
Սայաթ- Նովա	270 մ
Խնաջյան	1310 մ
Երեբունի	640 մ
Աբովյան	640 մ
Դեմիրճյան	1200 մ
Շահումյան	480 մ
Գետափնյա	220 մ
Վ. Սարգսյան	720 մ
Գրիբայեդով	220 մ
Ընդամենը	8660մ

Բազմաբնակարան շենքերում աղբահանությունը իրկանանացվում է շաբաթական 3 օր

Հ/հ	ԲԲ շենքի հասցեն
1.	Գետափնյա 8
2.	Գետափնյա 13
3.	Կ. Դեմիրճյան 1
4.	Կ. Դեմիրճյան 2
5.	Կ. Դեմիրճյան 3
6.	Վ. Սարգսյան 12
7.	Վ. Սարգսյան 19
8.	Շահումյան 5
9.	Շահումյան 7
10.	Զահուկյան 15

11.	Ջահուկյան 18
12.	Էրեբունի 4
13.	Էրեբունի 6
14.	Էրեբունի 17/1
15.	Երևանյան 9
16.	Երևանյան 14
17.	Երևանյան 17/2
18.	Դպրոցականների 10
19.	Դպրոցականների 11
20.	Դպրոցականների 13
21.	Դպրոցականների 13/2
22.	Դպրոցականների 20
23.	Դպրոցականների 21
24.	Դպրոցականների 26
25.	Դպրոցականների 27
26.	Անի 1
27.	Անի 2
28.	Անի 3
29.	Անի 4
30.	Անի 5
31.	Անի 6
32.	Անի 7
33.	Անի 8
34.	Անի 9
35.	Անի 10
36.	Անի 11
37.	Անի 12
38.	Անի 13
39.	Անի 15
40.	Անի 16

Համայնքի մնացած 43657 մ շաբաթական 2օր

Ձմեռվա ամիսներին ձյան մաքրման աշխատանքներ՝ ընդամենը 20 օր

Ջահուկյան	3060 մ
Սայաթ- Նովա	270 մ
Խնաջյան	1310 մ
Էրեբունի	1120 մ
Աբովյան	1080 մ
Դեմիրճյան	3330 մ
Շահումյան	220 մ
Գետափնյա	7200 մ
Վ. Սարգսյան	930 մ
Գրիբայեդով	1000 մ
Գագարին	920 մ
Դպրոցականներ	980 մ

Գորկի	1040 մ
Անի բ/զ	2300 մ
Արցախ	920 մ
Ընդամենը	25680 մ

Ինչպես նաև

Աղբավայրի խնամք՝ հողածածկումով	
Ջմեռային աշխատանքների նախապատրաստում / աղ-ավազային խառնուրդի, շլակի և այլ քիմիկատների ձեռքբերում/	55 խմ

ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ

Համայնքի տարածքի աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներին զուգահեռ անհրաժեշտ է իրականացնել նաև փողոցներում տեղադրված պլաստմասե և մետաղական աղբամանների դատարկում, հարակից տարածքի մաքրում և աղտահանում համաձայն սան – հիգիենիկ նորմերի պահանջի:

Ծառայության մատուցման ժամկետը	
Սկիզբը	ավարտը
01.02.2017թ.	31.12.2017թ.

* Կատարողը ծառայությունները մատուցում է ՀՀ Լոռու մարզ, ք. Տաշիր հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Տաշիրի համայնքապետարան
ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94
Տաշիրի ՏԳԲ
Հ/Հ 900272260028
ՀՎՀՀ 07200536

----------Է. Արշակյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
<<ՓԱՅԼՔ>> ՍՊԸ
ք. Տաշիր, Գրիբոյեդովի 14
ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 220143330235000
ՀՎՀՀ 06948686

----------Ա. Յավրումյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 1.1

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ

Տաշիր քաղաքի փողոցների, մայթերի և անցուղիների ավլում աղբից, ձյան մաքրում

հ/հ	Ծառայության նկարագիրը	Չ/մ	Քանակը
1.	Փողոցների, մայթերի և անցուղիների ավլում (ձեռքով և մեքենայացված), ավելվածքի բարձում և տեղափոխում աղբավայր,	քմ	17418400
2.	Ձյան մաքրում (ձեռքով և մեքենայացված)	քմ	3981600
	Ընդամենը		21400000
	Շահույթ ..%		2160000
	Ընդամենը		23560000
	ԱԱՀ 20%(Շրջանառության հարկ 5%)		1240000
	Ընդամենը		24800000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Տաշիրի համայնքապետարան
ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94
Տաշիրի ՏԳԲ
Հ/Հ 900272260028
ՀՎՀՀ 07200536

----------Է. Արշակյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
<<ՓԱՅԼՔ>> ՍՊԸ
ք. Տաշիր, Գրիբոյեդովի 14
ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 220143330235000
ՀՎՀՀ 06948686

----------Ա. Յավրումյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 1.2

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ

Տաշիր քաղաքի կենցաղային աղբահանության ծառայության մատուցման

հ /հ	Մաքրման գոտին	Չ/մ	Քանակը
	Համայնքի տարածքի կենցաղային և արտադրական թափոնների հավաքում, տեղափոխում և տեղադրում աղբավայրում մինչև 10 կմ	տն	3000
	Վերադիր ծախսեր		13716000
	Ընդամենը		13716000
	Շահույթ .. %		1370000
	Ընդամենը		15086000
	ԱԱՀ 20%(Շրջանառության հարկ 5%)		7940000
	Ընդամենը		15880000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Տաշիրի համայնքապետարան
ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94
Տաշիրի ՏԳԲ
Հ/Հ 900272260028
ՀՎՀՀ 07200536

----------Է. Արշակյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
<<ՓԱՅԼՔ>> ՍՊԸ
ք. Տաշիր, Գրիբոյեդովի 14
ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 220143330235000
ՀՎՀՀ 06948686

----------Ս. Ցավրումյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 2
<<02>> փետրվարի 2017 թ. կնքված
N ՀՀ ԼՍՏՀ- ԲԸԾՁԲ – 17/01
ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	Տաշիր համայնքի կենցաղային աղբահանության և սանիտարական մաքրման ծառայություններ	… %	9 %	18 %	27 %	36 %	45 %	54 %	63 %	72 %	81 %	90 %	100 %	100 %

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Տաշիրի համայնքապետարան
ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94
Տաշիրի ՏԳԲ
Հ/Հ 900272260028
ՀՎՀՀ 07200536

----------Է. Արշակյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
<<ՓԱՅԼՔ>> ՍՊԸ
ք. Տաշիր, Գրիբոյեդովի 14
ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 220143330235000
ՀՎՀՀ 06948686

----------Ա. Ցավրումյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 10
ՀՀ ԼՄՏՀ-ԲԸԾՁԲ-17/01 ծածկագրով
բաց ընթացակարգի հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ՀՀ ԼՄՏՀ-ԲԸԾՁԲ-17/01
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Տաշիր <<30>> հունվարի 2017 թ.

<<ՓԱՅԼՔ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն՝ <<Արա Յավրումյան, AH0540159, տրված 29.02.2008թ., 039>>,որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Ընկերությունը մասնակցում է **Տաշիրի համայնքապետարանի**(այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ **Տաշիր համայնքի կենցաղային աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների** ձեռքբերման ՀՀ –ԼՄՏՀ - ԲԸԾՁԲ-17/01 ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և գործում է մինչև Ընկերության կողմից կնքված պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Ընկերության անվանումը՝	<<ՓԱՅԼՔ>> ՍՊԸ
Հասցեն՝	ք. Տաշիր, Գրիբոյեդովի 14
Սպասարկող բանկի անվանումը,	ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ	220143330235000
ՀՎՀՀ	06948686
տնօրեն՝ ----------	Ա. Յավրումյան
(ստորագրություն)	
գլխ. հաշվապահ ----------	
(ստորագրություն)	
Կ.Տ	

1. ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ N
(պայմանագրի կատարման ապահովում)

2. Ներկայացման ամսաթիվը՝ "30" հունվարի 2017թ.

3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝ <<ՓԱՅԼՔ>> ՍՊԸ

4. Վճարողի բանկը՝ ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ ՓԲԸ

5. Վճարողի հաշվի համարը՝ 220143330235000

6. Վճարողի ՀՎՀՀ՝ 06948686

7. Վճարողի ՀՇՀ՝

8. Շահառու՝ Տաշիրի համայնքապետարան

9. Շահառուի ՀՎՀՀ՝ 07200536

10.Շահառուի բանկը՝ Տաշիրի ՏԳԲ

11.Շահառուի հաշվի համարը /հշ.N/ 900272260028

12.Գումարը թվերով և բառերով՝ 4.068.000 /չորս միլիոն վաթսունութ հազար/

13.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ (AMD)

14.Գործարքի /վճարման/ նպատակը՝ պայմանագրի կատարման ապահովում

15.Պայմանագրի ծածկագիրը՝ ՀՀ – ԼՍՏՀ – ԲԸԾՁԲ – 17/01

16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը 17. կից՝ --- էջ

19.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 19.բ. Կ.Տ.	18.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 18.բ. Կ.Տ.
Կատարված է շահառուի բանկի կողմից 20.ա. /_____/ /ստորագրություն/ 20.բ. Կ.Տ. "___" ___ 20___ թ.	Կատարված է վճարողի բանկի կողմից 21.ա. /_____/ /ստորագրություն/ 21.բ. Կ.Տ. 22.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.